ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԳԱԳԻԿ ԽՈՐԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ

Ականավոր պատմաբան և արևելագետ Գագիկ Խորենի Սարգսյանը (1926-1998) ծնվել է նշանավոր բանաստեղծ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Խ. Սարգսյանի ընտանիքում: 1946-1950 թթ. Գ. Սարգսյանը սովորել է Լենինգրադի համալսարանի (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան) պատմության ֆակուլտետում, որտեղ նրան Հին աշխարհի պատմություն են դասավանդել նշանավոր գիտնականներ Վ. Ստրուվեն, Ս. Կովալյովը, Ք. Կոլոբովան, ինչպես նաև հայտնի սեպագրագետ Ի. Դյակոնովը: Այս ընթացքում նա միաժամանակ հաճախել է նաև նույն համալսարանի արևելագիտության ֆակուլտետում կազմակերպված դասախոսություններին և ուսանել հատկապես ասորագիտությանը վերաբերող առարկաները, ինչպես նաև սովորել աքքադերեն (ասորա-բաբելոներեն) և ուրարտերեն՝ Ի. Դյակոնովի ղեկավարությամբ: Վերջինս Գ. Սարգսյանի ավարտական աշխատանքի («Հելլենիստական Բաբելոնի քաղաքն ու տաճարը համաձայն առայժմ չհրատարակված և Էրմիտաժում պահպանված բաբելոնյան սեպագիր տեքստերի») գիտական ղեկավարն էր:

Համալսարանն ավարտելուց հետո 1951-1954 թթ. Գ. Սարգսյանը ԽՍՀՄ ԳԱ պատմության ինստիտուտի՝ Լենինգրադի բաժանմունքի ասպիրանտ էր: 1954 թ. նա հաջողությամբ պաշտպանել է «Հին Հայաստանի քաղաքը» թեկնածուական ատենախոսությունը, վերադարձել Հայաստան և աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում: 1956-1962 թթ. եղել է ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական-քարտուղարը: Այնուհետև նշանակվել է ԳԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, ապա 1967 թ.՝ նույն ինստիտուտի Հին պատմության բաժնի վարիչ: 1967 թ. Գ. Սարգսյանը հաջողությամբ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանի պատմությունն ու ժամանակագրությունը և Մովսես Խորենացին»: 1971-1994 թթ. նա ՀԽՍՀ ԳԱ նորաստեղծ Արևելագիտության ինստիտուտի առաջին տնօրենն էր: 1988-1990 թթ. միաժամանակ վարել է ՀՀ ԳԱ փոխնախագահի պաշտոնը, ապա եղել է հասարակական գիտութ-

յունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարը: 1974 թ. ընտրվել է Հայաստանի ԳԱ թղթակից անդամ, իսկ 1986 թ. ՝ ակադեմիկոս[1]:

Գ. Սարգսյանի գիտական ունակությունները փայլատակեցին գիտությամբ զբաղվելու հենց առաջին օրերից: Նա սերունդներին թողել է մի քանի արժեքավոր մենագրություններ և 200-ից ավելի գիտական հոդվածներ: Դրանք տպագրվել են ոչ միայն մեր հանրապետության (ՊԲՀ, ԼՀԳ, Բանբեր ԵՊՀ-ի), այլև ԽՍՀՄ (ինչպես, օրինակ, ВДИ, Народы Азии и Африки. Вопросы истории), արտասահմանյան տարբեր երկրների ՝ Գերմանիա, Ֆրանսիա, Ավստրիա, Հունգարիա, ԱՄՆ, Իրան և այլն, առաջատար պարբերականներում: Անհրաժեշտ է ընդգծել, որ այդ աշխատություններն այսօր էլ լիովին պահպանել են իրենց գիտական այժմեականությունը: Հին աշխարհի պատմության և ոչ մի լուրջ մասնագետ, առավել ևս հայագետ, չի կարող շրջանցել Գ. Սարգսյանի գիտական ժառանգությունը: Փաստորեն, նա իր գիտական ներդրումով ամեմատելի է հին և միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրության բնագավառի մեր մյուս երկու մեծերի ՝ ԽՍՀՄ ԳԱ ակադ. Հ. Մանանդյանի և ՀԽՍՀ ԳԱ ակադ. Ս. Երեմյանի հետ: Գ. Սարգսյանը 1984 թ. ղեկավարել է նաև ԽՍՀՄ արևելագետների միության հայաստանյան բաժանմունքը: Նա ԳԱ ԱԻ սեպագիր քաղաքակրթությունների բաժանմունքի ղեկավարն էր, միաժամանակ ՝ նույն ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող խորհրդի նախագահը: Նա նաև ԳԱ պատմության, հնագիտության ու ազգագրության ինստիտուտների, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհուրդների անդամ էր, ինչպես նաև «Հայաստան-Հունաստան» ընկերության նախագահը:

1985 թ. Գ. Սարգսյանը արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի «Հայ ժողովրդի պատմության» ութ հատորյակի աշխատանքներին մասնակցելու համար: 1989 թ. նա միջազգային ճանաչում ստացած ԹԺԼ հանդեսի խմբագրական հանձնաժողովի անդամ էր: Գ. Սարգսյանի եռանդուն ջանքերի շնորհիվ էր, որ ստեղծվեցին «Հին Արևելք», «Կովկաս և Բյուզանդիա», «Արևելյան աղբյուրագիտություն» տարեգրքերը, ինչպես նաև «Խուռիացիներն ու ուրարտացիները» մենագրությունների շարքը: Նրա օրոք ԳԱ արևելագիտության ինստիտուտը ձեռք բերեց միջազգային ճանաչում, ամալրվեց բազմաթիվ երիտասարդ մասնագետներով, որոնց մեծ մասը կրթություն էր ստացել Մոսկվայում և Լենինգրադում:

Նշանավոր իրանագետ Մ. Դանդամաևը, անդրադառնալով Գ. Սարգսյանի գիտական ժառանգությանը նշել է. «Հազվադեպ է պատահում, որ երիտասարդ գիտնականը ՝ գիտություն մուտք գործելու պահից միաժամանակ զբաղվի երկու ՝ իրար հետ ոչ մի առնչություն չունեցող բնագավառների խնդիրներով և երկուսում էլ հասնի բա-

---

[1] Ավելի մանրամասն տե՛ս Ակադեմիկոս Գ. Խ. Սարգսյանի տպագիր աշխատությունների մատենագիտություն:Գիտնականի ծննդյան 90-ամյակի առթիվ, խմբ. ՝ Բարխուդարյան Վ.,Մուրադյան Պ., Ե., 2006:

ցառիկ արդյունքների՝ դրանց մնալով հավատարիմ իր ողջ գիտակից կյանքի ընթացքում»[2]:

Գ. Սարգսյանի գիտական ժառանգության մեջ կարևոր տեղ են գրավում հին Արևելքի պատմության խնդիրների հետազոտությունը, մասնավորապես հին Բաբելոնի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումների հարցերը: Գիտնականը հատուկ ուշադրություն է հատկացրել ինչպես Բաբելոն քաղաքին, այնպես էլ թագավորությանը, որն ընդգրկում է ահռելի ժամանակահատված՝ Ք.ա. III-I հազարամյակները: Նրա մասնագիտական հետաքրքրությունների ոլորտում էր այստեղի քաղաքներից Ուրուկը, որն ուներ հույժ կարևոր դեր ողջ Առաջավոր Ասիայի կյանքում՝ սկսած Ք.ա. IV հազ. վերջերից:

Մինչև անցած դարի 50-ական թթ. հին Արևելքի թագավորությունների սոցիալ-տնտեսական զարգացումների, մասնավորապես հնագույն Միջագետքի քաղաքպետությունների վերոհիշյալ խնդիրներն համարյա չէին ուսումնասիրվել: Դրանցով ինչ-որ չափով զբաղվել էին Ա. Տյումենևը և գերմանացի հայտնի փիլիսոփա, պատմաբան Մ. Վեբերը: Խորհրդային պատմագրությունում անցած դարի 50-ական թթ. Բաբելոնի սոցիալ-տնտեսական զարգացումների առաջին ուսումնասիրողները եղան Մ. Դանդամաևը, ապա նաև Գ. Սարգսյանը:

Ի. Դյակոնովի և Ե. Յակովլևի «Ասորա-բաբելոնյան աղբյուրները Ուրարտուի պատմության մասին» աշխատության համար անձնանունների և աշխարհագրական տեղանունների ցանկեր կազմելը Գ. Սարգսյանի համար հին Բաբելոնի, հատկապես դրա սելևկյան դարաշրջանի պատմության հարցերն ուսումնասիրելու շարժառիթ դարձավ: Բաբելո-յան հիմնահարցին վերաբերող նրա առաջին հոդվածն էր «Սելևկյան Բաբելոնի ինքնավար քաղաքը», որտեղ նա քննում էր սելևկյանների օրոք Բաբելոնում ինքնավարության ձևավորման նախադրյալները: Այստեղ հեղինակը հատուկ տեղ էր հատկացնում վերաբնակիչ հույների ունեցած դերին՝ ողջ Առաջավոր Ասիայի բնակչության կյանքում: Ինքնավարության հարցը հեղինակը վերլուծում էր ինչպես սոցիալական, այնպես էլ քաղաքական զարգացումների տեսանկյուններից:

Մեկ տարի անց նա հանգամանալից ներկայացրեց նաև Սելևկյան Բաբելոնում ձևավորված հողային փոխհարաբերությունների հարցը՝ զուգահեռաբար վերլուծելով այդ ժամանակի քաղաքի կառուցվածքը, քաղաքների և տաճարների միջև փոխհարաբերությունները, քաղաքականապես կախյալ և կիսանկախ բնակչության իրավասությունները: Երիտասարդ գիտնականը մանրամասն ուսումնասիրել է հատկապես «Բաբելոնյան ժամանակագրությունը», որը կազմվել էր սելևկյան դարաշրջանի 36-րդ տարում:

Գ. Սարգսյանի վաղ շրջանի աշխատությունների ցանկում կարևոր տեղ է գրավում «Սելևկյան ժամանակաշրջանի մասնավոր սեպագրական հաղորդակցություններն ըստ պետական Էրմիտաժի հավաքածուի» հոդվածը: Փաստորեն, նա ԽՍՀՄ պատմաբաններից առաջինն էր, որ զբաղվել է բաբելոնյան դարաշրջանի սելևկյան տեքստերի

---

[2] *Նույն տեղում, էջ 17:*

հարցերով և հարկադրված էր անցնելու դժվարին՝ «առաջամարտիկի» ուղին: Վերոնշյալ բոլոր հոդվածները միջազգային մեծ ճանաչում բերեցին հեղինակին:

Եթե Գ. Սարգսյանի առաջին հոդվածները վերաբերում էին ողջ Սելևկյան տերության սոցիալ-տնտեսական զարգացմանը, ապա 1970-ականթթ. մասնավորեցնելով հետազոտությունների շրջանակները՝ գիտնականը սկսեց անդրադառնալ ավելի որոշակի հարցերի, ինչպես, օրինակ՝ ստրուկների դրությանը հելլենիզմի դարաշրջանի Ուրուկ քաղաքում:

Ստրկության և ստրկատիրության, մասնավորապես տաճարային ստրկության հարցերի մասին նրա գրած հոդվածներն ունեցան միջազգային մեծ ճանաչում: Հատկապես պետք է առանձնացնել «Փաստաթուղթը «դեպուտատի» ծագման մասին» հոդվածը, որտեղ Գ. Սարգսյանը բացահայտում է «դեպուտատ» բառի փոխաբերական իմաստը միջագետքյան քաղաքակրթության արշալույսի շրջանում՝ Շումերում, Աքքադում, հին ասորեստանյան և բաբելոնյան թագավորություններում, երբ դեռևս իշխանության որոշ ներկայացուցիչներ ընտրվում էին բոլորի կողմից: Հետաքրքիր է «Isqu մթերաբաժինը ուշ Բաբելոնի քաղաքում» գործը: Այս մթերաբաժին-հարկի օրինակով նա պարզաբանում է, թե ինչպիսի փոփոխություններ է կրել հարկային քաղաքականությունը: Ըստ նրա, իսքվուն առաջացել էր դեռ III հազ. սկզբներին և առնչվում էր պաշտամունքային որոշակի պարտավորվածությունների: «Բաբելոնյան կշռաքարի մասին» հոդվածը այս պետության չափ ու կշռի միավորների մասին է՝ Կասսիտական դինաստիայի կառավարման շրջանում (1595-1155 թթ.): Այստեղ խոսվում է նաև հետկասսիտական (1155-626), հատկապես նոր-բաբելոնյան թագավորության շրջանում (626-539 թթ.) ստեղծված նոր էտալոն-միավորների մասին:

1970-ական թթ. Գ. Սարգսյանը սկսեց զբաղվել նաև բաբելոնյան անվանակոչության (օնոմաստիկա) հարցերով: Այստեղ կարևոր էին ինչպես նախկինում գոյություն ունեցած անձնանունների վերլուծությունը, այնպես էլ այն բոլոր փոփոխությունների և նորամուծությունների քննարկումը, որ տեղ գտան Առաջավոր Ասիայում, երբ հին հունարենը «խաչասերվեց» արևելքի մյուս լեզուներին: Գ. Սարգսյանը հետազոտեց միայն Միջագետքում տեղի ունեցած անվանափոխություններն ու նորամուծությունները հույների՝ այստեղ հայտնվելուց հետո: Նրան հետաքրքրում էր այն ամենը, ինչն առնչվում էր հելլենիստական Բաբելոնի հետ՝ սկսած տաճարներից և անվանակոչությունից, վերջացրած՝ ստրկության և կառավարման համակարգում տեղի ունեցած փոփոխություններով:

Հելլենիստական դարաշրջանի քաղաքային կյանքի վերլուծությանն էր նվիրված Գ. Սարգսյանի «Տիգրանակերտ: Հին Հայաստանի քաղաքային կյանքի պատմությունից» արժեքավոր մենագրությունը,որն այդ թեմային առնչվող առաջին արժեքավոր ուսումնասիրություններից էր ԽՍՀՄ-ում: Արձանագրենք, որ ռուս երկու հանրահայտ գիտնականների՝ Գ. Կոշելենկոյի և Է. Ֆրոլովի՝ հելլենիստական քաղաքներին նվիրված մենագրությունները գրվեցին Գ. Սարգսյանի այս աշխատությունից բավական ժամանակ անց: Փաստորեն, Գ. Սարգսյանը խորհրդային պատմագրության մեջ հելլե-

նիստական դարաշրջանի քաղաքների ուսումնասիրության առումով առաջատար գիտնականներից էր:

Հայ պատմագրության մեջ «Տիգրանակարտը» դեռևս միակ ամբողջական հետազոտությունն է, որտեղ գիտնականը կարևոր տեղ է հատկացրել պոլիսի սոցիալ-տնտեսական հարցերի վերլուծությանը՝ հունա-հռոմեական մատենագիրների և մեր պատմիչների վկայությունների համադրման ճանապարհով, զուգահեռներ անցկացնելով Սելևկյան Բաբելոնի և հին հայկական պետականությունների միջև:

Գրքում հեղինակը ներկայացրել է ոչ միայն քաղաքի բուն պատմությունը, այլև առաջին անգամ հատուկ ուշադրություն հատկացրել գերմանացի հանրահայտ հնագետ-պատմաբան Կ. Լեման (Լեհման)-Հաուպտի՝ 1899 թ. Տիգրանակերտում հայտնաբերած հունարեն արձանագրության տեքստի վերլուծությանը: Սա այս իմագիր սկզբնաղբյուրի՝ առաջին հանգամանալից և գիտական հիմքերի վրա դրված քննությունն էր, որը խիստ էական նշանակություն ունի, քանզի առայժմ գիտության մեջ վիճելի է համարվում Տիգրանակերտ քաղաքի տեղադրության խնդիրը: Անուրանալի է գիտնականի դերը օտարալեզու վիմագիր, հատկապես Արտաշես արքայի արամեական և Գառնիի հունարեն տեքստերի ուսումնասիրության ասպարեզում:

Առաջավոր Ասիայի նախահելլենիստական դարաշրջանի հետազոտության բնագավառում Գ. Սարգսյանն առաջին անգամ կիրառել և գիտական շրջանառության մեջ է դրել «քաղաքացիական-տաճարային համայնք» արտահայտությունը:

Հետագայում Գ. Սարգսյանի գիտական պրպտումներում տեղի ունեցավ կտրուկ շրջադարձ: Նրա ուսումնասիրությունների անկյունաքարը դարձավ Մովսես Խորենացուն նվիրված աշխատությունների հրապարակումը: Խորենացիագիտությունը՝ մինչ այդ անցել էր զարգացման բավական բարդ և երկարատև ճանապարհ: Թվում էր՝ այլևս անհնար է որևէ նոր խոսք ասել մեր Պատմահոր վերաբերյալ: Բայց նա կարողացավ տեսնել այն բացերը, որ առկա էին և հրատարակեց երկու մենագրություն Պատմահոր «Հայոց պատմության» մասին: 1965 թ. տպագրվեց Գ. Սարգսյանի «Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը» կարևոր աշխատությունը: Խորենացու ժամանակագրությանն անդրադարձել էին նաև նշանավոր հայագետներ, սակայն նրանց գործերում բացակայում էր ամենակարևորը՝ մատենագրի վկայությունների համաժամանակյա վերլուծությունը: Այս պատճառով էլ բազմաթիվ խրթին հարցեր չէին ստանում իրենց վերջնական պատասխանները և հանգեցնում էին գիտական թեժ բանավեճերի: Գ. Սարգսյանի մենագրությունը վերջակետ դրեց այդ վիճաբանություններին:

«Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին» (1966) նոր երևույթ էր այդ ժամանակաշրջանի Հայաստանի պատմու թյան ուսումնասիրության ասպարեզում: Այստեղ առաջադրված հարցերի քննարկումներն ունեին մի քանի ուղղվածություն: Հետազոտման առարկա էին դարձել հայոց պետականությունը, արքաներին և պաշտամունքին առնչվող հարցերը՝ նախահելլենիստական, հելլենիզմի, ապա՝ ավելի ուշ դարաշրջանների կտրվածքով: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ նա առաջին անգամ հայ և համաշխարհային պատմագրության մեջ փորձ արեց անդրադառնալու մեհենական պատմիչ Ողյումպ քրմի խնդրին: Սա պար-

զապես գիտնականի հայտնագործությունն էր, քանզի Խորենացու վկայությունից զատ, համարյա ոչինչ հայտնի չէր Ողյումպի մասին: Աշխատության վերջում հեղինակն անդրադարձել է նաև Արտաշես I-ի գործունեության վերլուծությանը:

Հ. Մանանդյանի «Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան)» ստվարածավալ և Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» հանրահայտ մենագրություններից հետո նշանակալից էր նաև Գ. Սարգսյանի «Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին» աշխատության հրապարակումը: Փաստորեն, բաց էր մնացել ստրկատիրական դարաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական հիմնահարցերի ամբողջական և համապարփակ ուսումնասիրությունը: Գ. Սարգսյանը, կիրառելով շարադրանքի պատմահամեմատական մեթոդը, օգտագործեց ինչպես անտիկ պատմիչների տեղեկությունները, այնպես էլ այն եզրահանգումները, որ մինչ այդ կատարել էին ռուս և արևմտյան պատմագիտական դպրոցների մի շարք նշանավոր տեսաբաններ (Ա. Լենցման, Ս. Ուտչենկո, Ե. Շտաերման, Ի. Ամուսին, Վ. Ստրուվե, Մ. Դանդաման, Ա. Տյումենև, Վ. Ուեստերման, Մ. Վեբեր, Ե. Հոնիգման, Ա. Մարիսք և այլք): Աշխատությունում, հողային սեփականության ձևերի և հասարակության դասակարգային կառուցվածքի տարբերակումներից բացի, կարևոր են նաև բնակավայրերի տարատեսակ ու իրարամերժ անվանումների (ավան, գյուղ, գեղ, շեն, դաստակերտ, քաղաք) մեկնաբանությունները: Հեղինակը բացահայտել է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման միտումները՝ սկսած ուրարտական շրջանից մինչև վաղ ֆեոդալիզմն ընկած ժամանակահատվածը Ք. հ. (IVդ.):

Հելլենիստական դարաշրջանից մինչև Արշակունիները Հայաստանի պատմական, սոցիալ-տնտեսական և զաղափարամշակութային զարգացումներին վերաբերող հիմնախնդիրները Գ. Սարգսյանը քննել է «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության I հատորում: Այստեղ կարևոր էր հատկապես Հայաստան-Արևմուտք (Հռոմեական հանրապետություն, ինչպես նաև փոքրասիական պետություններ) առնչությունների ուսումնասիրությունը: Այս գրքում նա առաջին անգամ շրջանառության մեջ դրեց իր հայտնաբերած՝ պատմիչ Հիերոնիմոսի վկայություններից մեկը, որը վերաբերում էր մեր Արտաշես I արքայի՝ Սելևկյան թագավորության դեմ հարավային արշավանքին: Այս հայտնագործությունը լիովին փոխեց Արտաշես I-ի կողմից հայկական հողերի վերամիավորման մասին մինչ այդ գոյություն ունեցած տեսակետները: Հետագայում նա դարձավ «Հայ ժողովրդի պատմություն» աշխատության հատորյակի (Ե., 1972) համահեղինակներից մեկը, որտեղ ամբողջապես նրան է պատկանում հին Հայաստանին վերաբերող հատվածը: 1980 թ. այս աշխատությունը տպագրվեց նաև ռուսերեն: Երևույթ էր «Հայկի սերունդները» ստվարածավալ աշխատությունը, որն ուներ քաղաքակրթական ուղղվածություն՝ դառնալով հայ իրականության մեջ դրա առաջին և հաջողված փորձերից մեկը:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյակի տոնակատարությունների նախօրյակին լույս տեսավ գրքի ռուսերեն թարգմանությունը (1990), որը կատարել էր Գ. Սարգսյանը՝ գրելով նաև 50 էջանոց առաջաբանը և ծանոթագրությունները:

Ամենին չնսեմացնելով Խորենացու նախկին թարգմանիչ Մ. Էմինի աշխատանքը (Մոսկվա, 1893)՝ այսուհանդերձ, Գ. Սարգսյանի թարգմանությունը շատ հարցերում գերազանցում է նախորդին և ամանակատարյալն է Պատմահոր բոլոր թարգմանությունների մեջ: 1991 թ. տպագրվեց նաև Գ. Սարգսյանի «Մովսես Խորենացի» ուսումնասիրությունը, որը հենց նույն տարում հրատարակվեց նաև ռուսերեն և անգլերեն:

Նա նաև մի շարք հանրապետական՝ («ՊԲՀ», «ԼՀԳ») և միութենական առաջատար հանդեսների (ԹԺԼ), ինչպես նաև Հ. Մանանդյանի «Երկերի» հրատարակության խմբագրական հանձնաժողովների անդամ էր (հ. Ա-Զ, Ե., 1977-1985), գործուն մասնակցություն է ունեցել անտիկ պատմիչների երկերի հայերեն թարգմանության և հրատարակության հարցերում: Քսենոփոնի «Անաբասիսում» (Ե., 1970) Գ. Սարգսյանը անտիկ մատենագրի կյանքին և ստեղծագործությանը վերաբերող մեկնաբանական հատվածում տվել է Հերոդոտոսի «Պատմության» հայերեն անգուգական թարգմանությանն առնչվող մեկնաբանությունները, խմբագրել Ն. Ադոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (Ե., 1987) կոթողային մենագրության հատուկ առաջաբանը: Նա խմբագրեց նաև Ն. Ադոնցի՝ ֆրանսերենից թարգմանված «Հայաստանի պատմությունը», Ե. Տեր-Մինասյանի, Թ. Ավդալբեկյանի, Ժ. Էլչիբեկյանի, Կ. Մուրադյանի և այլոց մենագրությունները, ինչպես նաև Ն. Կունի «Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները» աշխատությունը: Կազմել և հրատարակել է բազմավաստակ գիտնականներ Հ. Մանանդյանին, Բ. Առաքելյանին, Ս. Երեմյանին, Ի. Դյակոնովին նվիրված կենսամատենագիտությունները:

Մշտապես կապված լինելով ԵՊՀ-ի պատմության և արևելագիտության ֆակուլտետների հետ՝ բազմազբաղ և բազմավաստակ գիտնականը նաև նշանակալի դեր ունեցավ դասագրքերի և մեթոդական աշխատությունների ստեղծման ասպարեզում: Նա «Հայ ժողովրդի պատմության» քրեստոմատիայի առաջին հրատարակության I հատորի (1981 թ.) խմբագիրներից էր: Երկար տարիներ հանրապետության դպրոցներում դասավանդվում էին «Հայոց պատմության» դասագրքի (5-րդ դասարանների համար) հին և վաղ միջնադարյան Հայաստանին վերաբերող բաժինները:

Գ. Սարգսյանը ոչ միայն մեծ գիտնական էր, այլև լուսավոր անձնավորություն: Եթե չլիներ նրա նվիրվածությունն ու պահանջկոտությունը, ապա ներկայիս ՀՀ-ն չէր ունենա հին աշխարհի պատմության հետազոտության այն դպրոցը, որի ակունքներում կանգնած է հանճարեղ գիտնականն ու համեստ քաղաքացին:

Արդեն 15 տարուց ավելի է, ինչ մեզ հետ չէ Գ. Սարգսյանը: Սակայն որևէ հետազոտող, որ զբաղվում է հին Հայաստանի և Առաջավոր Ասիայի, մասնավորապես Սելևկյան Բաբելոնի պատմությամբ, չի կարող շրջանցել նրա գիտական ժառանգությունը: Մեծանուն գիտնականը մշտապես կենդանի կմնա իր թողած գիտական ժառանգությամբ՝ տպագրված աշխարհի ավելի քան 15 երկրներում:

ՄԻՆԱՍՅԱՆ Է. Գ.
Պատմական գիտությունների դոկտոր

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Հ. Ժ.

Պատմական գիտությունների թեկնածու